



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ը. Տարի, Թիւ 2, Յունուար 2025



ՄԵԾԱԳՈՅՆ ԱԻԵՏԻՍԸ՝ ԱՆ ՄԵՋԻ ՀԵՏ Է

Ամանոր...: Դարձեալ Ամանոր է:

Կ'ուզենք ամէն ինչ Լուսաւոր տեսնել... նոր յոյսերով, նոր իղծերով եւ նոր երազներով լեցուն:

Կ'ուզենք ամէն ինչ Լուսաւոր տեսնել... անելի արեւոտ, անելի պայծառ օրերով առլեցուն:

Ամանորի այս տօնական օրերուն պէտք է հարց տանք մենք մեզի, թէ ինչպէ՞ս կ'իմաստաւորենք մեր կեանքը: Պօղոս առաքեալ կ'օգնէ մեզի իր եփեսագիներուն ուղղած նամակով. « Զեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէք: Մի՛ ապրիք անմտօրէն, այլ՝ իմաստուններու պէս...: Ուստի անմտութիւն մի՛ ընէք. հասկցէք, թէ ինչ կ'ուզէ Տէրը ձեզմէ՛ (Եփ 5.15-17): Եւ եթէ կ'ուզենք գիտնալ թէ ինչ կ'ուզէ Տէրը մեզմէ, պէտք է երթանք դէպի Բեթղեհէմ եւ խոնարհութեամբ նայինք անշուք մտորին, ուր Աստուած խոնարհելով մարդեղացաւ եւ ներկայացաւ մարդկութեան որպէս քաջ հովիւ. «Ես եմ իսկական հովիւր: կը ճանչնամ ոչխարներս, եւ անոնք ալ գիտ կը ճանչնան» (Յի 10.14): Իսկական, քաջ եւ արթուն հովիւր ՔՐԻՍՏՈՍ ԻՆՔՆ Է. Քրիստոս որպէս քաջ հովիւ՝ մարդկութեան զոհը դարձաւ, որպէսզի մարդը հաշ-տեցնէ Աստուծոյ հետ, որպէսզի մարդը ձերբազատուի իր մեղքերէն: Հետեւաբար մեր գոյութեան իմաստը կը բացատրուի ու կ'արժեւորուի միայն ու միայն Քրիստոսով եւ Բեթղեհէմեան լուսաւոր ճանապարհով:

Այսօր եթէ նայինք մեր անհատական, հաւաքական, ընտանեկան թէ ազգային ու եկեղեցական կեանքին կը տեսնենք, որ դարձեալ անորոշութիւն կը տիրէ: Այո, անորոշ է գալիքը, անորոշ է սպասուածը, ակնկալուածը, սակայն պէտք է ունենանք հաւատքը, յոյսն ու գիտակցութիւնը, որ կայ Տէր մը, Փրկիչ մը, որ կ'առաջնորդէ մեզ, կը հարթէ մեր ճամբան եւ հոգատար է մեր կարիքներուն:

Գիտակցաբար առաւելութիւնը ունինք անորոշութեան մէջ վստահելու, որ Աստուած իր Միաձին Որդիին միջոցով եկաւ օգնելու մեզի, մեր միտքերը մաքրելու եւ մեզ սրբութեան տաճար դարձնելու: Եկաւ մեզ սնուցանելու, իրբեւ կենաց հաց բաշխուելու, նոր կեանք եւ փրկութիւն պարգեւելու:

Երբ այսօր Բեթղեհէմի մտորին կը նայինք, նայած կ'ըլլանք Յիսուս մանուկին՝ Աստուածորդիին եւ կը դառնանք նոյն հօտի ոչխարներ:

Հետեւաբար, այսօր որպէս հաւատարիմ ոչխարներ, եթէ կ'ուզենք հետելիլ Քրիստոսի՝ Մեծ Հովուապետին, ընդունինք Անոր որպէս մեր կեանքի ապաւէնն ու նպատակակէտը, «Ճանապարհը, Ճշմարտութիւնը եւ Կեանքը»: Ըլլանք փրկութեան արժանի հաւատարիմ ոչխարներ՝ ժառանգորդները երկնքի արքայութեան:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան սրբազան տօներուն, կը յիշենք Աստուծոյ սիրոյն անսահման խորհուրդը եւ Անոր յայտնութիւնը մարդկութեան:

Հայ Առաքելական Եկեղեցին այս երկու սրբազան տօները միասին կը տօնէ Յունուար 6-ին, նշելով՝ մեր Տիրոջ եւ Փրկիչին Յիսուս Քրիստոսի ծնունդը եւ Անոր մկրտութիւնը Յորդանան գետին մէջ: Այս երկուքը միասին կը փոխանցեն մեծ Աւետիար՝ Աստուած եկաւ մեր մէջ բնակելու, բերելով լոյսը, յոյսն ու փրկութիւնը ամբողջ ստեղծագործութեան:

Սուրբ Ծննդեան խորհուրդը կը բացայայտէ մեր Փրկիչին խոնարհութիւնը, որ ծնաւ համեստ մտորին մէջ, բայց հրեշտակներու կողմէ հոշակուեցաւ, որպէս Թագաւորներու Թագաւոր, Տէրերու Տէր: Այս պահը երկինք եւ երկիր միացնող պահ է, ուր յաւիտենական Բանը՝ Աստուծոյ Խօսքը մարմին կ'առնէ: Բոլորիս հրաւեր է, խորհելու Աստուծոյ անսահման սիրոյն մասին եւ կոչ է՝ պատասխանելու խոնարհութեամբ, շնորհակալութեամբ եւ հաւատքով:

Քրիստոսի Ծնունդն ու Մկրտութիւնը, Աստուածայայտնութիւն է, որովհետեւ Քրիստոսի Աստուածային ինքնութեան բացայայտումն է, որ կը փոխանցուի համայն մարդկութեան:

Քրիստոսի հրաշափառ Մկրտութեան ժամանակ երկինքը կը բացուի, Սուրբ Հոգին աղանակերպ կը յայտնուի եւ Հօր Աստուծոյ ձայնը կը հոշակէ. «Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ» (Մատթէոս 3.17): Այս պահը Յիսուս Քրիստոսի ծառայութեան սկիզբն է եւ Սուրբ Երրորդութեան բացայայտութիւնն է:

Այս տօները միայն պատմական յիշատակներ չեն, այլ կենդանի իրողութիւններ, որոնք կը ձեւաւորեն մեր հաւատքը եւ ինքնութիւնը: Անոնք հրաւեր մըն են մեզմէ իրաքանջիւրիին, նորոգելու մեր կապը Քրիստոսի հետ, բաժնեկցելու անոր լոյսը ուրիշներու հետ եւ հոշակելու անոր գալուստի ուրախութիւնը՝ յոյսի կարօտ աշխարհին մէջ:

Թող այս սուրբ շրջանին, մեր սրտերը բացուին Աստուծոյ վերափոխիչ զօրութեան առջեւ, որպէսզի անոր լոյսը ճառագայթէ մեր խօսքերուն, գործերուն եւ աղօթքներուն միջոցով:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱԻ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱԻ
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
ՁԵՋԻ ՄԵՋԻ ՄԵԾ ԱԻԵՏԻՍ

Հայր Յակոբ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Քննեցէ՛ք դուք ձեզ, տեսնելու համար թէ նոյն հաւատքին մէջ կը մնա՞ք: Փորձեցէ՛ք դուք ձեզ. Քրիստոս Յիսուսի ներկայութիւնը կը զգամք ձեր ներսիդին, թէ պարզապէս իր անունը կը կրէք» (Բ. Կորնթացիս 13:5):

“Examine yourselves to see whether you are in the faith; test yourselves. Do you not realize that Christ Jesus is in you—unless, of course, you fail the test?” (2 Corinthians 13:5)





Բաժանեա Զի Տիրեցես Բաժնէ Որ Տիրես

Ուսողութեան եւ չափագիտութեան օրէնքները հասկնալու համար, բաժանման ու միացման հաշուարկումները գործնական մեթոտներ են: Այնպիսի հաշիւներով է որ հատ ու կտոր իրերը քով քովի գալով կը կազմեն առարկան եւ նիւթական գոյութիւնները: Բայց ոեւէ բան ուսումնասիրելու համար եւ հասկնալու անոր տարրալուծական կազմուածքն ու ինչ ըլլալը, հարկ է նախ անհատը, մին եւ յատուկը զտել ընդհանուրէն եւ մաղելով քննել ու հետազօտել գանձիկա:

Արժեքաբանութեան (Study of Values) ուսումը կը միտի ոչ միայն առարկայի մը, ճարտարապետական կառոյցի մը եւ կամ գործուած արուեստի մը հիստորիայի չափերը թուելու, այլ նաեւ արժէք տալու, գնահատելու եւ իմաստաւորելու: Գծագրուած պատկերի մը արժէքը միայն անոր լայնատարած շրջանակի, պատկերի հսկայութեամբ կամ փոքրութեամբ չարժեւորուի, այլ անոր գունագեղ կազմուածքին ներդաշնակութեան, երբեմն հնութեան եւ մանաւանդ անոր պարունակութեան իմաստին, նպատակին եւ պատճառին համար: Ուրեմն որեւէ արժեքատուր հիստորիայ, նիւթի եւ ստեղծագործութեան մը ետին, մտածող եւ ծրագրող միտք մը կայ, որ արուեստագետ, վարպետ եւ կամ արարիչ կը կոչուի: Ամէն ինչ որ կայ եւ գոյութիւն ունի մեր շուրջը, ունի նաեւ իր տէրն ու տիրականը: Հին կտակարանի ծննդոց գիրքին մէջ Աստուած կ'ըսէ .- «Աճեցէք, բազմացէք, երկիրը լեցուցէք եւ տիրեցէք անոր»:

Մարդը տէրն է ուրեմն ամէն ինչին որ բարերար Աստուած յայթայթած է եւ գոյացուցած, ի պէտս կեանքի յարատեւութեան: Գրութեանս վերնագիրը, բաժնէ կը տիրես (լատիներէն Divide et Impires) Մաքիավելլիի խօսքն է: Աստուածային պատգամը չարաշահող մարդիկ մինչեւ հիմա չեն կրնար հասկնալ եւ կամ չեն ուզեր հասկնալ որ ինչ կը նշանակէ տէր դառնալ: Տէրը այն չէ որ իշխանութիւն եւ կամ հեղինակութիւն կը պարտադրէ, մարդիկ իրարու մէջ սեւ եւ ճերմակի կը բաժնէ ու ատելութիւն կը սերմանէ: Իսկական տէրը այն է որ տիրութիւն կ'ընէ, գիտէ հոգ տանիլ, տուն շինել, գուրգուրալ, բարեխնամօրէն բաժնեկցիլ իր ունեցուածքը, եւ ապահովել որ իր պատասխանատուութեան ենթակայ ամբոխը մարդավայել, արժանապատիւ ու Աստուածահաճոյ կեանք մը ապրի: Աշխարհի մէջ սովը կը տիրէ մինչեւ այսօր ոչ որովհետեւ մարդիկ հաշուել, բաժնել, կիսել ու գինները հատել չեն գիտեր, այլ՝ որովհետեւ մէկը բոլորին եւ բոլորը մէկին կարգախօսը շատուց մոռցած է: Հսկայ սննդամատակարար հաստատութիւններ կը նախընտրեն ուտեստեղէնները աղբ նետել քան բաշխել չգատրին ու սովահարին:

Խօսքը միայն նիւթական ունեցուածքի մասին չէ, այլ՝ ընդհանրապէս մեր եսակեդրոն եւ ինքնանպատակ հոգեմտաւոր ապրելակերպին: Կեանքը արժեքաւորելու համար, մենք պէտք ունինք իրարու, պէտք ունինք մեր մին, միայնակն ու միակութիւնը խառնելու ուրիշին կեանքին, սիրելու սիրուելու, զգալու ու զգացուելու, առնելու ու տալու, եւ պատկերազօծելու այդ ամենամեծ արուեստը որ կեանք կը կոչուի: Մարդ-անհատ (Individual, in-divided Individuo լատիներէն), այսինքն կարելի չէ մարդը բաժնել ընդհանուրէն, կարելի չէ կողմացնել եւ մեկուսացնել զայն, կարելի չէ ապրիլ անձնատէր կեանք մը եւ կամ միայնակ, այլ ինչպէս որ բառ մը նախադասութեան մէջ իմաստ կը ստանայ, այնպէս ալ մարդը ընկերութեան մէջ կ'արժեւորուի: Ինչ քան որ բաժանարար հակումներ ունի իր մէջ անիկա ատերիչ ու քանդիչ է: (Atom A-to-ma) անբաժան գոյգը, հիպէն ատերիչ ռումբի կը վերածուի այն ժամանակ միայն, երբ երկու հիպէները բաժնուին իրարմէ...: Ուրեմն միութիւնը դրական, շինիչ ու կեանքի յարատեւութիւնը ապահովող առաւելութիւններ ունի իր մէջ:

Սատանա բառը որ շատ անգամ բաժանարար իմաստով կը յիշենք սուրբ գիրքի վերլուծութիւններուն մէջ, կու գայ բաժնելու մարդկութիւնը, անհատը իր ընտանիքէն, բարեկամներէն ու ընկերութենէն, ազգերը լարելու իրարու դէմ եւ սփռելու ատելութիւնը, նախանձը, ազատութիւնն ու հպարտութիւնը: Յիշենք առաջին ընտանիքը դրախտի մէջ, սատանան յաջողեցաւ Ադամն ու Եան բաժնել ու հեռացնել Աստուծմէ: Հոն ուր բաժանում կայ, հոն չարիք կայ: (Diablo սատանա Dia=երկու-bolus) բառը երկուքի բաժնող է (Symbol-us) խորհուրդ, իմաստ միութեան եւ ամբողջական պատկերով, այսինքն կատարեալ, բարիի եւ միի իմաստները ունին:

Վերջապէս կեանքը ապրելու արուեստն է, իսկ անոր արուեստագէտը մարդն է: Մեր հաշիւները այնպէս մը կատարենք երկրի վրայ, երկինքի մէջ շահելու կատարելութիւնն ու ամենէն արժեքատու տեղը, որ մեր միանալն է Աստուածայինին, ուր հարկ է մտնել խղճի կատարեալ հանգստութեամբ եւ հոգիի խաղաղութեամբ:

«Եւ այս բոլոր բաներուն վրայ սէրը հազէք, որ կատարելութեան կապն է: Ու Աստուծոյ խաղաղութիւնը ձեր սրտերուն մէջ թագաւորէ, որուն դուք կանչուեցաք մէկ մարմնով»: (Կողոսացիս 3. 14-15)

Վարդանաշունչ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿԸ ԽՕՍԻՆ...

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒԱԾ ԱՂՕԹՔԸ

«Պէտք է միշտ եւ ուշորութեամբ աղօթենք»:

ԻՆՉՊԷՍ ԱՂՕԹԵԼ:

1.- Նախ պէտք չէ աղօթենք սոսկ մարմնական սովորութեան մը համաձայն, կամ բարձրաձայն ու աղաղակելով, կամ լռութեամբ, եւ կամ ալ ծնրադիր, այլ պէտք է ուշադիր մտքով, հանդարտութեամբ եւ ժամադրութեամբ հասկացողութեամբ սպասենք Աստուծոյ եւ ակնկալենք զայն, մինչեւ որ ան գայ եւ ողողէ մեր սիրտը, միտքն ու հոգին եւ մեր ողջ էութիւնը՝ իր բոլոր մոտքերով, անցքերով եւ զգայարանքներով: Այն ատեն մենք կը յաջողինք լուռ ըլլալ հոն՝ ուր լռութիւն պէտք է, բարձրաձայն աղօթել՝ երբ որ անհրաժեշտ է, եւ աղօթել աղաղակելով՝ այնքան ատեն որ միտքը Աստուծոյ զօրութեամբ պրկուած է: Այնպէս՝ ինչպէս մարմինը երբ որեւէ աշխատանք կը կատարէ, ամբողջապէս այդ գործին վրայ կեդրոնացած կ'ըլլայ եւ բոլոր անդամները իրարու կ'օգնեն, նոյնպէս ալ հոգին, պէտք է աղօթքով եւ սիրով ամբողջութեամբ Տիրոջ նուիրուած ըլլայ, որպէսզի մտածումներուն ճամբով չցրուի, այլ իր բոլոր կարողութիւններն ու մտածումները մէկտեղած՝ Քրիստոսի ժամանումին սպասէ:

2.- Այսպիսով, Քրիստոս պիտի ծագի հոգիին վրայ եւ անոր պիտի սորվեցնէ աղօթելու ճշմարիտ եղանակը, տալով իրեն հոգետր մաքրամաքուր աղօթքը եւ Աստուծոյ վայել «հոգիով ու ճշմարտութեամբ պաշտամունքը» (Յի 4.24):

Այնպէս՝ ինչպէս վաճառականը իր շահը ապահովելու համար մէկ ձեռք աշխատանքով չի բաւականանար, այլ զանազան միջոցներ օգտագործելով՝ կ'ընդարձակէ իր աշխատանքը, որպէսզի կրկնապատկէ ու աւելցնէ իր շահերը եւ փորձ-փորձի ետեւէ կը կատարէ ու միշտ կը զգուշանայ այն աշխատելաձեւերէն, որոնք շահաբեր չեն, նոյնպէս ալ մենք պարտինք ամենայն վարպետութեամբ եւ կարողականութեամբ աշխատիլ եւ գործել բոլոր մակարդակներու վրայ, որպէսզի ճշմարիտ շահը ապահովենք, այսինքն՝ զԱստուած, որ մեզի կը սորվեցնէ, թէ ինչպէս պէտք է աղօթենք: Այս միջոցաւ Տէրը բարի մտադրութեամբ կը հանգչի հոգիին վրայ, զայն իր փառքին համար իբրեւ աթոռ պատրաստելով, եւ անոր վրայ միայն կը բազմի ու կը հանգչի: Այս է, որ կը լսենք Եգեկիէլ մարգարէն, այն՝ ինչ որ կը վերաբերի Աստուծոյ գահը կազմող ոգեղէն էակներուն՝ չորս կենդանակերպերուն, որոնք կը ներկայացնէ լեցուն աջքերով: Նոյնպէս ալ հոգին, որ զԱստուած կը կրէ՝ ամբողջականօրէն աջքերու կը վերածուի:

ՄԵՇՆ ՍՈՒՐԲ ՄԱԿԱՐ
«ՀՈԳԵՒՈՐ ՔԱՐՈՂՆԵՐ»
Հայացուց՝ Մակար Արք. Աշգարեան
(Շարունակելի)

GRIEF AS A BLESSING

[...] Grief, when it is only an inner experience of sadness and sorrow, will keep you down in the very depths of the plunge itself. It will immobilize you and weigh you down with guilt and anguish. But when you know that this despair has within it some sweet blessing, you disrupt the grief/sorrow partnership, and the fall helps you regain your footing and soar above the devastating potholes of life on earth.

Here are some alternatives to the grief/sorrow dilemma:

Stop yourself in the middle of a sorrowful moment and very deliberately say, "Do I have to suffer now, inside as well as outside, over this loss, which I will ultimately come to see as a blessing?" Listen and follow your response. No matter what, you are introducing to yourself the possibility of an improved response to despair.

Practice being able to honestly express your feelings of loss without believing that you must be filled with sorrow as well. It is possible to feel the loss, express it, and still know within the blessing in all of this. Do not demand instant change. Allow what is there to be there at the same time that you allow the possibility of different behavior.

You may have accepted grief and sorrow as inseparable because you have been taught that it is cold and inhuman to be otherwise. When you know that all falls are blessings and all losses are in divine order, you will gradually sweeten the sorrow and you will gain the energy to soar to a higher altitude in all areas of your life.

WISDOM OF THE AGES
WAYNE W. DYER

ԱՂՕԹՔ ՅԱՋՈՂՈՒԹԵՆԷ ՄԸ ԵՏՔ

Բարեբաճ Աստուած, միայն դուն ես որ զիս քու բարիքներով կ'ողողես: Կ'օրհնաբանենք քեզ եւ շնորհակալութիւն կը յայտնենք այն բոլոր բարիքներուն համար՝ որ առատօրէն անարժանիս կը պարգեւես քու սիրոյ գանձերէդ: Կը փառաւորենք քեզ եւ ամբողջ սրտովս գոհութիւն կը յայտնենք, միշտ եւ ամէն բանի համար, եւ ամէն բանէ աւելի կը խնդրեմ՝ որ քու արքայութիւնդ, արդարութիւն եւ իմաստութեան շնորհես ինձի, որպէսզի կարենամ լաւապէս մատակարարել ձրիօրէն քու տուած պարգեւներդ՝ կանուխէն խորհելով եւ պատրաստուելով ապագայ ծախորդութեանց (հմմտ Ղկ 16.3-9), եւ ըստ այնմ յօժարական ուրախութեամբ կարօտեալներուն տամ ինչ որ պէտք է իրենց, ինչպէս որ դուն կը բաւարարես իմ բոլոր պէտքերս:

Միշտ քու երկիւղիդ, սուրբ օրէնքիդ եւ արդարութեանդ մէջ պահէ զիս, որպէսզի չըլլայ որ հպարտանամ եւ անհաւատ դառնամ այս անցաւոր հարստութիւններով, որովհետեւ այս կեանքի մէջ չկայ կայուն բան եւ վիճակ, եւ չեն գիտեր թէ վաղը ինձի ինչ կը բերէ: Հետեաբար կ'աղաչեմ, քու բարի պարգեւներուդ հետ միասին՝ նաեւ խնարհ, հեզ եւ գթափրտ հոգի մը տուր ինձի, որպէսզի քու կամքիդ եւ սուրբ օրէնքիդ համաձայն ապրիմ, եւ նոյնիսկ երբ ծախորդութեան եւ ջքարորութեան, վիշտերու եւ տազնապներու մատնուիմ, կարենամ տոկալ եւ կրել քաջութեամբ, անտրտունջ եւ գոհունակ սրտով, միշտ շնորհակալութիւն յայտնելով քու սուրբ կամքիդ համար. որովհետեւ քեզմէ է ամէն բան, եւ դուն է որ կը հատուցանես, մեր գործերուն եւ մտածողութեան համաձայն: Քեզի փանք յախտեանս: Ամէն:





ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

Ինչ կը նշանակէ հրեշտակ:

Հրեշտակ մեր լեզուին մէջ կը նշանակէ պատգամաբեր, դեսպան: Իսկ առաքելական թուղթի մէջ կ'ըսուի.- Չէ որ անոնք սպասաւոր հոգիներ են, եւ կը դրկուին անոնց համար, որ փրկութիւն պիտի ժառանգեն (Եբր 1.14):

Ուրեմն հրեշտակներն ալ հոգի են:

Ինչքն գիտենք որ հրեշտակներ կան:

Սուրբ Գիրքէն: Բոլոր մարդկութիւնը կը հաւատայ անտեսանելի ոգիներու գոյութեան: Համագոյքը լի է գաղտնիքներով եւ հոգեկան աշխարհը խորհրդաւոր ու զարմանալի յօրինուածութիւն մը ունի: Հետեւաբար մենք չենք կրնար տեսնել զանոնք, բայց անոնք այլեայլ կերպարանքներով կ'երեւին մարդոց, ինչպէս կը կարդանք Սուրբ Գիրքի մէջ:

Աւետարանի պատմութեան ընթացքին մէջ կը յիշուին հրեշտակներ:

Սուրբ Կոյս Մարիամ հրեշտակէն ընդունեց Փրկիչին մայր ըլլալու անտեսը (Ղուկաս 1.26-38):

Յովհաննէս Մկրտիչի ծննդեան պատմութեան սկիզբը (Ղուկաս 1.13-19):

Յիսուս Քրիստոսի յարութեան պատմութեան մէջ (Մատթէոս 28, Ղուկաս 24, Յովհաննէս 20):

Եթէ հրեշտակները հոգի են, ինչո՞ւ համար ուրեմն թեւաւոր մարդու կերպարանքով կը նկարագրուին:

Ինչպէս որ Աստուած մարդու կերպարանքով կը յայտնուի, հրեշտակներն ալ թեւաւոր մարդու կերպարանքով կը նկարագրուին, իբրեւ խորհրդանշան իրենց երազահաս սպասաւորութեան:

Մարդիկ ժամանակին ալ խորհրդանշանը շինած են օդակի կամ թեւաւոր անիւի ձեւով: Բայց ժամանակը նիւթական բան չէ, հետեւաբար ի՞նչ անիւ ունի, ի՞նչ թեւ:

Ասոնք որեւէ գաղափար, որեւէ հոգեկան կամ իմացական ըմբռնում շոշափելի եւ հասկնալի ընելու համար ստեղծուած կերպեր եւ միջոցներ են:

Յիսուս Քրիստոս ինչ ըսաւ հրեշտակներու մասին:

«Ձգոյ՛ջ եղէք, այս փոքրիկներէն մէկը չարհամարիէք, որովհետեւ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն Հօրս երեսը, որ երկինքն է» (Մատթէոս 18.10):

«Պիտի տեսնէք երկինքը բացուած եւ Աստուծոյ հրեշտակները, որոնք կ'ելլեն ու կ'իջնեն Մարդու Որդիին վրայ» (Յովհաննէս 1.51):

Առաքելներու ատենեւ վաղեմի եկեղեցւոյ մէջ հրեշտակները մեծ դեր կը կատարեն, այսինքն շատ մը յայտնութիւններու մէջ կ'առաջնորդեն, Աստուծոյ կամքը եւ պատգամները կը յայտնեն: Պետրոս եւ Պօղոս Առաքելներու կեանքին եւ անոնց թուղթերուն մէջ հրեշտակներուն պաշտօնն ու ծառայութիւնները ուշագրաւ են:

Հրեշտակները անուն եւ թիւ ունին:

Ոմանց անունները յիշուած են Սուրբ Գրոց մէջ, զոր օրինակ՝ Գաբրիէլ, Միքայէլ, Ռափայէլ, Անայէլ, Ուրիէլ, Դակուէլ, Բարաքիէլ, Ադոնիէլ, Փանուէլ, իսկ իրենց թիւը «հազարք հազարաց եւ բիւրք բիւրոց» ըսուած է, այսինքն անթիւ ու անհամար:

Քանի դասի կը բաժնուին հրեշտակները:

Սուրբ Հայրերու գիրքերուն մէջ երեք դասի բաժնուած են. իւրաքանչիւր դասի մէջ երեք աստիճանաւորումով, այսպէս.

Ա. Դաս.- ԱԹՈՌՔ, ՔԵՐՈՎԲԷՔ, ՍԵՐՈՎԲԷՔ:

Բ. Դաս.- ՏԵՐՈՒԹԻԻՆՔ, ԶՕՐՈՒԹԻԻՆՔ,

ԻՇԽԱՆՈՒԹԻԻՆՔ:

Գ. Դաս.- ՊԵՏՈՒԹԻԻՆՔ, ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏՔ,

ՀՐԵՇՏԱԿՔ:

Նոր Կտակարանի մէջ ակնարկութիւններ կան այս դասակարգութեան մասին:

Պօղոս Առաքել կ'ըսէ. «Ո՛չ հրեշտակներ, ո՛չ իշխանութիւններ, ո՛չ ալ զօրութիւններ կրնան զատել մեզ Աստուծոյ սէրէն» (Հռոմայեցիս 8.38):

Դարձեալ. «Աստուած մեռելներէն յարոյց Քրիստոսը, նստեցուց Իր աջ կողմը՝ երկինքի մէջ, բոլոր իշխանութեան եւ պետութեան, զօրութեան եւ տէրութեան եւ ամէն անունի վրայ» (Եփեսացիս 1.20-21):

ՔԱՐԳԷՆ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

THE BIG ISSUES AND WHAT THE BIBLE SAYS ABOUT THEM

MENTAL HEALTH

Mental health is something we all have. Positive mental health being able to cope with day-to-day life and having a healthy self-esteem and belief in our abilities. Mental ill-health is the opposite- it's when we find everyday demands hard to cope with and lack a positive sense of self. We all have ups and downs, but when our mental health negatively impacts our lives and relationships with others, it can become a problem. This is when someone may have a mental illness.

You've probably heard of some of the more common problems, such as eating disorders, depression and anxiety, but there's a wide range of issues which can look different for each person. Just like someone who's got the flu, people with mental health problems need help and support to get better.

Most importantly, God wants us to know that he's right in the middle of every situation, and it's important for us to talk to God about our issues.

If you, or someone you know, struggles with their mental health, you may want to talk to someone you trust about it.

KEY BIBLE VERSES:
PSALMS 46.1-3, PSALM 13.26, MATTHEW 11.28-30, PSALM 34.17-20;
PHILIPPIANS 4:8

THE APOSTLES

And he called unto him his twelve disciples, and gave them power over unclean spirits, to cast them out, and to heal all manner of disease and all manner of sickness. Now the names of the twelve apostles are these: The first, Simon, who is called Peter, and Andrew his brother; James the son of Zebedee, and John his brother; Philip, and Bartholomew; Thomas and Matthew the publican; James the son of Alphaeus, and Thaddeus; Simon the Cananaean, and Judas Iscariot, who also betrayed him. (Matt. 10.1-4)

THE PRAYER has been heard. The Father has revealed his will to the Son. Jesus calls his twelve disciples and sends them into the harvest. He makes them his "apostles," his messengers and fellow-workers. "And gave them power," for the power is all-important. It is not a word or a doctrine they receive, but effective power, without which the work could not be done. They need power stronger than that of the Prince of this world, the devil. The disciples know the devil's power well enough, although it is his cleverest trick to deny his power and to pretend that he does not exist. It is just this supreme cunning of his that must be countered: he must be brought to light and overcome through the power of the Christ. In this work the apostles stand by the side of Christ himself and help him to do his work. So, Jesus imparts to them a share in the highest gift he possesses, his power over unclean spirits, and over the devil who has taken possession of the human race. In virtue of his commission the disciples have become like Christ. They do the works of Christ.

The names of the first messengers are preserved for all time. Just as the people of God has consisted of twelve tribes, so it is twelve messengers who are to complete the work of Christ towards that people. Twelve thrones will be prepared for them in the Kingdom of God, and they will sit on them judging the twelve tribes of Israel (Matt. 19.28). The heavenly Jerusalem will have twelve gates through which the holy nation will enter in, with the names of the twelve tribes inscribed on them, and the walls of the city have twelve foundations bearing the names of the twelve apostles (Rev. 21.12, 14).

The only bond of unity between the twelve is their choice and call. Simon the Rock-man, Matthew the publican, Simon the Zealot, the champion of law and justice against the oppression of the Gentiles, John the beloved disciple, who lay on Jesus' breast, and the others, of whom we know nothing expect their names, then lastly Judas Iscariot, who betrayed him. No power in the world could have united these men for a common task, save the call of Jesus. But that call transcended all their previous divisions, and established a new and steadfast fellowship in Jesus. Even Judas went forth to the Christ-work, and the fact that he did so will always be dark riddle and an awful warning.

THE COST OF DICIPLESHIP
Dietrich Bonhoeffer





THE BOOK OF 1 SAMUEL

WRITTEN: PROBABLY 600-400BC
(USING STORIES FROM A MUCH EARLIER TIME)

WHAT YOU NEED TO KNOW:

This book is set between the time of the judges and the time when kings began to rule in Israel. Here we are introduced to Samuel, who was the final judge and a prophet (someone used by God to speak to the nation). The Israelites went to Samuel to ask for a king. Neither Samuel nor God was keen on this idea, as God was intended to be Israel's only king. However, God allowed their request, and Saul became their first king. The Israelites were a bit behind other nations in the way they lived at this time – their main enemies, the Philistines, were cultured, had better technology and were rich. But the most important thing is not money or power but having a strong desire to follow God's ways. When Saul messed up, it was David, 'the kind of man God wants', who replaced him as king.

WHY READ IT?

There are some amazing stories in this book. Through them we see how easily we can make decisions, one choice at a time, that take us away from God. (For us, that might mean choices about who we spend the most time with, or what places we visit.) But there is always a way back to God. Here we see that people who follow him closely can beat all the odds, whether they're up against power, wealth, birth, opportunity or even popular opinion.



THE LETTER OF GALATIANS

WRITTEN: AROUND AD48-52

WHAT YOU NEED TO KNOW:

Galatians is a letter to the church in the area of Galatia (modern-day Turkey). Like many other churches at the time, Galatia had been influenced by false teachers who were saying that all Christians, Jewish or Gentile, had to obey Jewish laws, such as not eating certain kinds of meat. Paul wrote this fiery letter to put them straight. He displayed his anger that the way of freedom that Jesus came to bring had been turned back to a message of law-keeping.

WHY READ IT?

Galatians really drives it home that we are not saved (or in a right relationship with God) because we follow rules or laws, but only because of the grace and love of Jesus Christ. It's a big reminder that we are saved by grace, not by anything we do – and that's so freeing!

GALATIA WAS ROMAN PROVINCE -

A big area that was home to the churches of Antioch, Lystra, Derbe and Iconium. (Read Acts 13-15 to find out about Paul's trips to these places.) Galatia was the first location where Paul's mission to the Gentiles really took off.



PRAYER FOR PEACE

Almighty God and Creator, You are the Father of all people on the earth. Guide, I pray, all the nations and their leaders in the ways of justice and peace. Protect us from the evils of injustice, prejudice, exploitation, conflict and war. Help us to put away mistrust, bitterness and hatred. Teach us to cease the storing and using of implements of war. Lead us to find peace, respect and freedom. Unite us in the making and sharing of tools of peace against ignorance, poverty, disease and oppression. Grant that we may grow in harmony and friendship as brothers and sisters created in Your image, to Your honor and praise. Amen.

ՆԻԿԻՈՅ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԺՈՂՈՎԻ 1700-ԱՄԵԱԿ

ԻՆՉ Է ՀԱՒԱՏԱՄՔԸ

Հաւատամքը մեր հաւատքին արտայայտութիւնն է: Հաւատք ըսելով կը հասկնանք երեք բան.-

1) Աստուծոյ վրայ մեր վստահութիւնը եւ անմիջականօրէն մեր չտեսած ճշմարտութիւններուն մեր համոզուածութիւնը:

2) Կեանքով կամ գործերով արտայայտուած հաւատքը:

3) Մեր հաւատացած ճշմարտութիւններուն ամբողջութիւնը:

Հաւատամքը այս վերջինն է, խտացուած վիճակով: Քրիստոնէական հաւատքի ճշմարտութիւնները Քրիստոս ինք յայտնեց մեզի, թէ՛ Հին Կտակարանով՝ գրաւորապէս, թէ՛ իր մարդեղութեան մէջ՝ բերանացի: Առաքեալները այս ճշմարտութեանց պահպանները եւ փոխանցողները եղան, թէ՛ բերանացի քարոզութեամբ, եւ թէ՛ գրաւորապէս, Նոր Կտակարանի գիրքերուն մէջ:

Եկեղեցին ժառանգեց այդ ճշմարտութեանց ասանդը, եւ զայն նախանձախնդրօրէն պահեց առաքելական յաջորդութեամբ:

ԻՆՉՊԷՍ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՒ ՀԱՒԱՏԱՄՔԸ

Քրիստոնէութեան առաջին իսկ դարէն, Եկեղեցոյ մէջ եւ անոր կողքին յայտնուեցան աղանդներ, կամ հերձուածներ, որոնք ճշմարիտ հաւատքէն շեղած անձեր կամ խմբակցութիւններ էին: Սխալ վարդապետութիւններ սկսան տարածուիլ ըլլայ Աստուծոյ ինքնութեան վերաբերեալ, ըլլայ աշխարհի ստեղծագործութեան, ըլլայ Ամենասուրբ Երրորդութեան հասկացողութեան, ըլլայ Քրիստոսի ինքնութեան (աստուածութեան կամ, մարդեղութեան), ըլլայ Սաւրբ Հոգիին աստուածութեան վերաբերեալ, եւ այլն:

Աղանդները պատճառ եղան, որ Եկեղեցին շատ կանուխէն իր հաւատքը արձանագրէ խտացեալ ձեւով, որպէսզի ճշմարիտ հաւատացեալները զայն սորվին եւ այդպէս դաւանին իրենց հաւատքը: Այս խտացեալ դաւանութիւնները կը կոչենք «Հաւատքի Հանգանակ»: Տեղական եկեղեցիները իրենց Հանգանակները ունէին, որոնք թէպէտ թեթեւ տարբերութիւններ ունին իրարմէ, բայց հիմնական կէտերը նոյնն էին: Հնագոյններէն մէկը կը կոչուի «Առաքելական Հանգանակ»:

Չորրորդ դարուն լայն տարածում գտաւ Արիոս Աղեքսանդրացիի եւ իր հետեւորդներուն աղանդը, որ կ'որանար Քրիստոսի աստուածութիւնը: Այս աղանդին դէմ պայքարելու համար, տարբեր եկեղեցիներէ 318 հայրապետներ հաւաքուեցան Փոքր Ասիայի Նիկիա քաղաքին մէջ 325 թուականին: Ասոնց մէջ էր նաեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչի որդին եւ յաջորդը՝ Ս. Արիստակէս: Նիկիոյ ժողովը վաւերացուց բոլոր եկեղեցիներուն կողմէ՛ ճանչցուած Հանգանակ մը, որ ժողովին անունով կոչուեցաւ Նիկիական Հանգանակ: Այս Հանգանակը զօրեղապէս կը շեշտէր Քրիստոսի աստուածութիւնը եւ մեր փրկութեան համար ճշմարիտ մարդեղութիւնը:

Նոյն դարուն արձարծուած երկրորդ մեծ հարցը Սուրբ Հոգիին աստուածութիւնն էր, որ կարգ մը աղանդաւորներ կ'որանային: 381 թուականին, Կոստանդնուպոլսոյ մէջ գումարուեցաւ ժողով մը, 150 հայրապետներու ներկայութեամբ, որ հռչակեց Սուրբ Հոգիին աստուածութեան մասին Եկեղեցոյ հաւատքը: Ժողովը այդ առիթով վաւերացուց արդէն գոյութիւն ունեցող Հանգանակ մը, որուն վրայ Սուրբ Հոգիին բաժինը որոշապէս կ'արտայայտէր Եկեղեցոյ հաւատքը:

Այս ձեւով լրացած Հաւատամքը կամ Հաւատքի Հանգանակը ընդունուեցաւ բոլոր եկեղեցիներուն կողմէ, եւ դարձաւ ուղղափառութեան նշան:

Հայ Եկեղեցոյ գործածած Հանգանակը, որ Նիկիական կը կոչուի, բուն Նիկիականը չէ, այլ՝ անոր լրացուած տարբերակը:

ՀԱՒԱՏԱՄՔԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆ

1. Եկեղեցին հաւատքի համայնք մըն է: Այսինքն՝ հաւատացող համայնք մըն է, միակ հաւատքի մը շուրջ խմբուած եւ միակ հաւատքով մը կապուած համայնք մըն է:

Հաւատամքը արտացոլացումն է այդ հաւատքին: Ո՛չ միայն խտացումն է Եկեղեցոյ հաւատալիքներուն, այլ հաւատքի փորձառութեան: Այլ խօսքով, մենք անոր մէջ կը կարդանք պատմութիւնը այն հանգրուաններուն, որոնցմէ անցաւ այդ հաւատքը՝ հասնելու համար մինչեւ մեր օրերը:

2. Եկեղեցին խոստովանող համայնք մըն է: Խոստովանիլ բայը այստեղ կ'արտայայտէ՝ որեւէ ճշմարտութիւն ճանչնալ, ընդունիլ եւ յայտարարել իմաստը: Կ'ըսենք նաեւ՝ դաւանիլ: Ճշմարտութեան ոեւէ հետեւորդ՝ իր ճանչցած եւ ընդունած ճշմարտութիւնը պէտք է խոստովանի կամ դաւանի յայտնապէս, այլապէս ճշմարտութեան հետեւորդ մը չէ (Մտ 10.32-33 : Հո 10.9-10): Հետեւորդութիւնը տեսական չէ, այլ՝ գործնական:

Հաւատամքը հիմն է Եկեղեցոյ դաւանութեան, որով մենք կ'արտայայտենք Քրիստոսի մեր պատկանելիութիւնը, մեր ինքնութիւնը:

3.- Եկեղեցին հաւաքական մարմին մըն է: Պօղոս առաքեալ Քրիստոսի Եկեղեցին կը ներկայացնէ իրրեւ Քրիստոսի Մարմինը: Միակ մարմին մը՝ բազմաթիւ անդամներով: Իսկ այդ անդամները տեղական եկեղեցիներն են, ինչպէս նաեւ իւրաքանչիւր եկեղեցին բաղկացնող անդամները՝ առանձնաբար ու հաւաքաբար: Հաւատամքը հիմն է Եկեղեցոյ միութեան:

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ
ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՒԱՏԱՄՔԻՆ
Ջարեհ Արք. Ազնաւորեան



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prélature Arménienne du Canada



514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Հոգեշնորհ Տ. Յակոբ Վրդ. Եագուպեան
3401 Olivar Asselin Montréal, Quebec H4J 1L5